ԿԱՐԾԻՔ

Արման Թադևոսյանի
«Ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության՝ որպես անմիջական ժողովրդաիշխանության իրացման ձև» վերտառությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար ներկայացված թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Արման Թադևոսյանի՝ «Ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության՝ որպես անմիջական ժողովրդաիշխանության իրացման ձև» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը նվիրված է ժողովրդաիշխանության կարևորագույն ինստիտուտներից՝ ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնությանը: Ընտրված թեմայի արդիականությունը կասկած չի հարուցում, հատկապես՝ հաշվի առնելով երկրում անցկացված սահմանադրական բարեփոխումները, դրանց արդյունքում ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության ինստիտուտի ներդրումը սահմանադրական մակարդակում և դրանով պայմանավորված՝ հանրաքվեի ինստիտուտի կարգավորման ներքո՝ նոր, այդ թվում՝ ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության կարգավորմանն ուղղված, օրենսդրության ընդունումը:

Ինչպես նշում է հեղինակը, հետազոտությունն ունի երկու հիմնական նպատակ՝ ժողովրդաիշխանության սկզբունքի տեսագործնական ուսումնասիրությունը և ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության՝ որպես անմիջական ժողովրդաիշխանության իրականացման համակարգում առանձին ինստիտուտի համալիր, բազմակողմ ուսումնասիրության արդյունքներով գործող իրավակարգավորումների կատարելագործման նպատակով գիտականորեն հիմնավորված մոտեցումների և առաջարկների ներկայացումը:

Ներկայացված աշխատանքը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, որոնք ներառում են թվով յոթ պարագրաֆներ, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Ներածությունում հիմնավորվում է ընտրված թեմայի արդիականությունը, հետազոտության նպատակն ու խնդիրները, ատենախոսության տեսական, նորմատիվ և մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, հետազոտության արդյունքների փորձարկումը և աշխատանքի կառուցվածքը:

«Ժողովրդաիշխանության սկզբունքի տեսական հիմնախնդիրները» վերտառությամբ առաջին գլխում հեղինակը դիտարկում է ժողովրդաիշխանության սկզբունքի հասկացությունն ու էությունը, ինչպես նաև ժողովրդաիշխանության սկզբունքի իրացման տեսական հիմնախնդիրները:

Երկրորդ գլխում, որը վերնագրված է «Անմիջական ժողովրդաիշխանության սկզբունքի դրսևորման ձևերը և ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնությունը», հեղինակն ուսումնասիրում է անմիջական ժողովրդաիշխանության իրականացման ձևերի ընդհանուր բնութագիրը Հայաստանի Հանրապետությունում, ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության ինստիտուտի հասկացությունը, էությունն ու բովանդակությունը, ինչպես նաև անմիջական ժողովրդաիշխանության, դրա առանձին ինստիտուտների և ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության հարաբերակցությունը:

Երրորդ գլուխը նվիրված է ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության իրավական կարգավորման հիմնախնդիրներին: Հեղինակը, մասնավորապես, անդրադառնում է ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության օրենսդրական ամրագրման և իրացման առանձնահատկություններին: Միաժամանակ, սույն գլխի շրջանակներում հեղինակի կողմից հատուկ ուշադրության են արժանացել ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության զարգացման հեռանկարներն էլեկտրոնային ժողովրդավարության համատեքստում:

Եզրակացության մեջ ամփոփվել են կատարված հետազոտության արդյունքները: Աշխատանքի արժանիքներից է այն հանգամանքը, որ մանրակրկիտ վերլուծության է ենթարկված ժողովրդաիշխանության սկզբունքն իր ամենալայն դրսևորմամբ, դիտարկված է ժողովրդական իրավաստեղծ

նախաձեռնության տեղն անմիջական ժողովրդաիշխանության ձևերի համակարգում, ինչպես նաև ժողովրդաիշխանության սկզբունքի ու ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության հարաբերակցությունը:

Ընդհանուր առմամբ, հեղինակին հաջողվել է գիտական պատշաճ մակարդակով ներկայացնել դատողություններ և հետևություններ ու հիմնավորել որպես գիտական նորույթ պաշտպանության ներկայացվող դրույթները: Աշխատանքը տպավորիչ է օտարերկրյա պետությունների և միջազգային փորձի բազմակողմանի և խորը ուսումնասիրության տեսանկյունից:

Աշխատանքի արժանիքներից է այն հանգամանքը, որ հեղինակն ուսումնասիրում է բազմաթիվ երկրների օրենսդրությունն ու փորձը ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության ինստիտուտի կարգավորման և կիրարկման հարցում:

Կարևորում ենք, որ հեղինակն ուսումնասիրել է ոչ միայն ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության ինստիտուտը կարգավորող ՀՀ օրենսդրական դաշտը՝ արտահայտելով արժեքավոր դատողություններ և գնահատականներ, այլ նաև ուսումնասիրել և աշխատանքում ներկայացրել է այն նվազագույն, աննշան փորձը, որն առկա է Հայաստանի Հանրապետությունում:

Աշխատանքի ակնհայտ արժանիքներից է նաև այն հանգամանքը, որ հեղինակը լուրջ ուշադրություն է դարձրել ինստիտուտի զարգացմանն ուղղված ոչ միայն իրավական կարգավորումներին, այլ նաև դրա գործնական կիրառման ժամանակակից կառուցակարգերին (օրինակ՝ էլեկտրոնային ժողովրդավարության ներքո):

Աշխատանքը արժեքավոր է նաև նրանով, որ Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ համալիր կերպով ուսումնասիրվում է ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնությունը:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարելի է եզրակացնել, որ ատենախոսությունում պատշաճ խորությամբ և բազմակողմանիորեն ուսումնասիրվել և վերլուծվել են

առաջադրված հարցերը, արվել են հիմնավորված հետևություններ և առաջարկություններ: Ընդհանուր առմամբ հեղինակը հասել է իր առջև դրված հետազոտական նպատակներին՝ ցուցաբերելով ինքնուրույնություն իր դատողություններում և ցուցադրելով ստեղծագործական միտքը:

Միաժամանակ անհրաժեշտ ենք համարում ստորև ներկայացնել որոշ նկատառումներ, որոնք առնչվում են ատենախոսությանն ընդհանրապես ու թեմայի առանձին հարցադրումներին: Այսպես.

1. Պաշտպանության ներկայացված դրույթներից 2-րդ կետում հեղինակը, որպես գիտական նորույթ է առաջադրել հետևյալը. «հայրենական իրավագիտությունում «ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնություն» հասկացության վերաբերյալ չկա ձևավորված միասնական մոտեցում, հստակեցված չէ նաև վերջինիս էությունն ու բովանդակությունը: Ժողովրդական, քաղաքացիական բազմատեսակ նախաձեռնությունների մեջ ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնությունն առանձնանում է նրանով, որ ուղղված է նորմատիվ իրավական ակտի նախագիծ առաջադրելու միջոցով օրենսդրության մեջ փոփոխություններ իրականացնելուն»: Թեև, ատենախոսության բուն տեքստում, մասնավորապես 2-րդ գլխի 3-րդ պարագրաֆում այս հարցադրումներին որոշակի անդրադարձ կատարվել է, սակայն կարծում ենք՝ լրացուցիչ հիմնավորումների կարիք ունի այդ դրույթի գիտական նորույթ պարունակելու հանգամանքը:

2. Պաշտպանության ներկայացվող 9-րդ դրույթում շարադրվել են իրավակարգավորումների կատարելագործմանը վերաբերող որոշ առաջարկություններ, միևնույն ժամանակ հարկ է նկատել, որ ատենախոսության բուն տեքստում, հատկապես 3-րդ գլխում, տեղ են գտել բազմաթիվ այլ օրենսդրական առաջարկություններ: Բնավ նպատակ չունենալով նվազեցնել 9-րդ կետում նշված դրույթների կարևորությունն ու անհրաժեշտությունը, այնուամենայնիվ, գտնում ենք, որ այդ առաջարկությունների առանձնացումը և որպես պաշտպանության ներկայացվող առանձին դրույթ ներառելը կարող է «ստվերել» աշխատանքում տեղ

գտած մյուս առաջարկությունները: Բացի դրանից, գտնում ենք, որ նպատակահարմար կլիներ ատենախոսության մեջ արտացոլված առաջարկությունները ներկայացնել իրավասու մարմինների քննարկմանը և արդյունքները հավելվածի տեսքով կցել թեզին:

3. Ատենախոսության տեքստի շարադրանքում, հատկապես 3-րդ գլխում, կիրառվում են իրավական ակտերի, պետական մարմինների անվանումների որոշ կրճատ ձևակերպումներ, որոնք սակայն առաջացնում են տեքստի ընկալման որոշ դժվարություններ, օրինակ՝ ««Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենք (սույն պարագրաֆում այսուհետ՝ Սահմանադրական օրենք)» (էջ 110), ««Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենք (սույն պարագրաֆում այսուհետ՝ ԱԺ կանոնակարգ)» (էջ 110), «Կենտրոնական ընտրական հանձնաժողով (սույն պարագրաֆում այսուհետ՝ Հանձնաժողով)» (էջ 116), «Ազգային ժողովի աշխատակարգ (սույն պարագրաֆում այսուհետ՝ Աշխատակարգ)» (էջ 124) և այլն:

4. Առկա են նաև որոշ տեխնիկական բնույթի սխալներ, վրիպակներ, օտարալեզու հասկացություններ, օրինակ՝ «իրավաստեղծ» (էջեր 103, 129, 132), «Բուլղարիաում» (էջ 55), «նահագներում» (էջ 91), «դրևսորումն» (էջ 153), «էլեկտորատ» (էջեր 90, 92, 103), «ինտերնետ» (էջ 154) և այլն:

Վերը նշված նկատառումներն ու առաջարկություններն ամենևին չեն նսեմացնում աշխատանքի ակնհայտ արժանիքները: Ատենախոսության հիմնական տեքստում և սեղմագրում կատարված առաջարկություններն ու եզրակացությունները համապատասխանում են թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակի հրապարակած հոդվածներն արտացոլում են ատենախոսության մեջ տեղ գտած տեսական ու կիրառական եզրահանգումներն ու առաջարկությունները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ Արման Թադևոսյանի՝ «Ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության՝ որպես անմիջական ժողովրդաիշխանության իրացման ձևի արդի հիմնախնդիրները» վերտառությամբ

թեկնածուական ատենախոսությունն իրենից ներկայացնում է համակարգային, համալիր և ավարտուն հետազոտություն, բավարարում է ՀՀ կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 327 որոշմամբ սահմանված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

Պաշտոնական ընդդիմախոս,
ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի
իրավաբանական վարչության պետ,
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ

Լ. Ա. Հակոբյան

22.06.2023թ.

Լ.Ա. Հակոբյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի
Գլխավոր քարտուղար՝

Գ. Պետրոսյան

22.06.2023թ.